



Հ/04.2/18746-2020

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 564 - Ա

« 13 » 05 2020թ.

ք.Երևան

**ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 878-Ն որոշմամբ հաստատված կարգով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 740-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության (այսուհետ՝ ԱԻՆ ՓԾ) Շիրակի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Հրամանը հայտարարել ըստ առնչության:
Հիմք՝ ԱԻՆ ՓԾ տնօրեն, գեներալ-մայոր Վ. Գաբրիելյանի գրությունը:

12.05.2020

X

ՖԵԼԻՔՍ ՑՈԼԱԿՅԱՆ

Подписано: TSOLAKYAN FELIKS 3701520046

Ֆ. ՑՈԼԱԿՅԱՆ

ԾՐԱԳԻՐ

Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների

1. Ներգրավման դեպքը և հիմնավորումները

Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության (այսուհետ՝ ԱԻՆ ՓԾ) Շիրակի մարզային փրկարարական վարչության (այսուհետ՝ ՄՓՎ) ճգնաժամային կառավարման կենտրոնի (այսուհետ՝ ՃԿԿ) աշխատանքների ծավալների ավելացմամբ պայմանավորված, նպատակահարմար է ներգրավել պայմանագրային հիմունքներով համապատասխան փորձագետ:

2. Փորձագետին ներկայացվող պահանջները

- 1) Բարձրագույն կրթություն.
- 2) առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ.
- 3) ռուսերեն լեզվի ազատ տիրապետում.
- 4) իր լիազորությունների հետ կապված անհրաժեշտ հմտություններ.
- 5) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

3. Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը

Փորձագետը ներգրավվում է մինչև մեկ տարի ժամկետով:

4. Աշխատանքների ակնկալվող արդյունքը

Փորձագետը մեկ տարվա ընթացքում իրականացնելու է ծրագրով նախատեսված աշխատանքներ, մասնավորապես՝

- 1) մասնակցում է արտակարգ դեպքերի, պատահարների վերաբերյալ, ինչպես նաև սոցիալ-կենսաբանական, կենցաղային բնույթի ահազանգերի սահմանված կարգով սպասարկմանը.
- 2) իրականացնում է տեղեկատվական շտեմարանների (ՄՓՎ ստորաբաժանումների, պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների ղեկավարների կոնտակտային տվյալները) արդիականացում.

- 3) մասնակցում է ազդարարման գործընթացներին.
- 4) իրականացնում է ՃԿԿ-ում գրանցված արտակարգ դեպքերի, պատահարների վերաբերյալ տեղեկատվության համակարգման աշխատանքներ.
- 5) մասնակցում է ՃԿԿ-ի օպերատիվ հերթափոխի (այսուհետ՝ ՕՀ) աշխատանքներին.
- 6) սահմանված կարգով տեղեկատվություն է տրամադրում ԱԻՆ ՓԾ ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի ՕՀ-ին՝ տեղյակ պահելով արտակարգ դեպքերի և պատահարների առաջացման, արձագանքման և հետևանքների վերացման գործընթացի և ավարտի մասին.
- 7) ՄՓՎ պետի, ՃԿԿ պետի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ:

5. Հաշվետվությունների ներկայացման և դրանց գնահատման արդյունքների ամփոփիչ ժամկետները

Փորձագետի աշխատանքը գնահատվում է ըստ փուլերի՝ վեց ամիսը մեկ և ամփոփիչ փուլ:

Կատարված աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

6. Աշխատանքի գնահատման չափանիշները

1. Արտակարգ դեպքերի, պատահարների, սոցիալ-կենսաբանական և կենցաղային բնույթի ահազանգերի սպասարկում.
2. տեղեկատվական շտեմարանների արդիականացում.
3. մասնակցություն ազդարարման գործընթացների և ՃԿԿ-ի օպերատիվ հերթափոխի աշխատանքներին.
4. արտակարգ դեպքերի և պատահարների առաջացման, արձագանքման և հետևանքների վերացման գործընթացի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում: